նկարիչն էր Կիւրակոս, պատրաստուած 1248 թուին։

Բայց ոչ միայն այս, այլ մեծ նմանութիւններ տեսնում ենք Կիւրակոսին եւ Յովհաննէսին յաջորդող Թորոս Ռոսլինի գործերի մէջ, ինչպէս Երուս. No. 251, 1260 թուականի 3բ. եւ 4ա., որ դարձեալ Եւսեբի եւ Կարպիանոսի խորաններն են. բայց նոյնպէս նոյն մանրանկարչի Սեբաստիայի աւետարանի, այժմ Բալթիմորի No. 539, էջ 6 եւ 7. (պատկ. 2 եւ 3)։ Նոյնը կարող ենք ասել Երուս. No. 1956, 1265 թուի աւետարանի համապատասխան խորանի մասին։ Համեմատութեան համար դնում ենք Սեբաստիայի աւետարանի համապատասխան նկարները, որ պ. Քէլէկեան սիրալիր կերպով դրել էր մեր տրամադրութեան տակ, իսկ այդ աւետարանի մասին կը խօսենք քիչ յետոյ։ Այս եւ ուրիշ նմանութիւններ, որ յետոյ պիտի մատնանշենք, ըստ ամենայնի Հռոմկլայի վարպետների ստեղծագործութիւնները չեն, շատ մոտիւներ եւ երեւոյթներ տեսնում ենք եւ հայ աւելի հնագոյն ձեռագիրների մէջ, ինչպէս 1200 թուին, Երզնկայի Աւագ վանքի Վարդան գրչի հիանալի գործը, երբեմն Կ. Պոլսում Ազգային Մատենադարանի սեպհականութիւն եւ այժմ Վաշինկտոնի Freer Gallery of Art-ում կամ աւելի վաղ Գագիկ Կարսի թագաւորի աւետարանի մէջ, բայց Հռոմկլան եւ յատկապէս Թորոս Ռոսլին շատ ճոխացրել է բազմազան մոտիւներով եւ տարրերով։



Պատկ. 17.— Մաշտոց Երուս. No. 2027, 40ա., 1256 Թուի

Միւս խորանների նկարագրութիւնը տեղի սղութեան պատճառով այստեղ տալ չենք կարող. ինչպէս 6–7, 12–13, 16–17, 20–21 եւ 24–25 որ ընծայականն է։ Ապա ամբողջ երեսներով նկարուած են չորս աւետարանիչներն ու նրանց սկզբնաղարդերը 28–29, 184–185,